

ապա ի վաճառ կը հանէին եւ կամ բռնի կը տեղաւորէին իրենց հողամասերու վրայ :

Տեսանք վերագոյն (էջ 91) թէ Մովսէս եւ Պօղոս վարդապետները երբ տուգանքի ենթարկուեցան Շահ Աբասէն (1618), ժողովրդեան նուիրաբերած ողորմութեան մէկ մասը գործածեցին գերիներ փրկանաւորելու :

Հանդէպ գերիներու այս բարեգլած վերաբերմունքը կը նկատուի Մովսէս կաթողիկոսի կեանքի յաջորդ տարիներու մէջ ալ : Այժմ ընդարձակ տարածած է ցանցը. աւելի գթառատ կը վարուի անոնց հետ հօտասէր հովիւր : Սահմանի թէ այս եւ թէ այն կողմը կազմակերպեց Մովսէս հայ մեծատուններն ու վաճառականները, նաեւ հասարակ ժողովրդեան վրայ դրաւ պարտք, որպէս զի իւրաքանչիւր ոք ըստ կարողութեան նպաստէ, գերիները ազատելու հայրենասիրական գործին : Այս տեղ երեւան կու գայ կաթողիկոսին ոգւոյն մեծութիւնը եւ սրտին ազնուութիւնը :

Կը հաւաստէ Ղուկաս Գառնեցի 1631ին, թէ Մովսէս «էր... ողորմած եւ գթած ի վերայ աղքատաց, մանաւանդ թէ եւ գերելոց. արդարեւ յորմէ հետէ մտեալ է սա ի յիշխանանիստ քաղաքն յերեւան՝ աւելի քան զհաղար գերի ի քրիստոնէից ազատեալ է ի ձեռաց այլազգեաց» (էջմ. 2372, թղ. 355բ) : Կը վկայէ նաեւ Առ. Դաւրիթեցի (312) թէ Մովսէս կաթողիկոսի ձեռք «բազում եւ առաւել գերիք ազատեցան ի գերչաց» եւ «զորս եւ տեսանէր ի գերեացն՝ անվրէպ առնոյր զնով եւ աղա-